

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ**

**0811.11.5 «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

**0811.11.01.5 «ԿԵՆԴԱՆԱԲՈՒՅԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ 2019**



### III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քնն.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում			1-ին կիս.	2-րդ կիս.	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.
						Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	14 շաբ.	13 շաբ.	15 շաբ.	12 շաբ.		
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3;4տ		72	30	42			36	36			
2.	Տնտեսագիտության հիմունքներ		3տ		54	24	30			54				
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		54	26	28				54			
4.	Իրավունքի հիմունքներ		5տ		36	26	10					36		
5.	Պատմություն		3տ		54	46	8			54				
6.	Ռուսաց լեզու		3,4տ		72	40	32			36	36			
7.	Օտար լեզու		3,4տ		72	40	32			36	36			
8.	Ֆիզկուլտուրա		3,4,5,6տ		108	100	8			28	26	30	24	
9.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		4տ		36	18	18				36			
10.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		28	10	18				28			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>586</b>	<b>360</b>	<b>226</b>			<b>244</b>	<b>252</b>	<b>66</b>	<b>24</b>	
<b>2.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>													
1.	Հաղորդակցություն		3տ		36	10	26			36				
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	12	24			36				
3.	Աշխատանքի գործունեության ընդհանուր հմտություններ		4տ		36	10	26				36			
4.	Համակարգչային օպերատորություն		3տ		36	6	30			36				
5.	Ձեռներեցություն		5տ		72	22	50					72		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>216</b>	<b>60</b>	<b>156</b>			<b>108</b>	<b>36</b>	<b>72</b>		
<b>3.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1.	Վայրի կենդանիների անատոմիա և ֆիզիոլոգիա		3տ		54	18	36			54				
2.	Վայրի կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները		3տ		54	28	26			54				
3.	Կենդանիների էկոլոգիա		4տ		54	26	28				54			
4.	Վայրի կենդանիների հետ աշխատանքի անվտանգության ապահովում		4տ		36	10	26				36			
5.	Անասնաբուժության և զոոհիգիենայի հիմունքներ		4տ		54	18	36				54			

6.	Մանրէակենսաբանություն		3տ		36	18	16	2			36			
7.	Վայրի կենդանատեսակների հետ աշխատանքներում կիրառվող սարքավորումներ և գործիքներ		4տ		18	6	12					18		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>306</b>	<b>124</b>	<b>180</b>	<b>2</b>			<b>144</b>	<b>162</b>		
<b>4.</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1.	Անողնաշարավոր կենդանիների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում		5տ		54	20	34					54		
2.	Երկկենցաղների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում		5տ		54	20	34					54		
3.	Սողունների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում		5տ		54	20	34					54		
4.	Վայրի թռչունների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում		5տ		72	30	42					72		
5.	Վայրի կաթնասունների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում		5տ		72	30	42					72		
6.	Վայրի կենդանիների արհեստական սերմնավորում		5տ		54	18	36					54		
7.	Անողնաշարավոր կենդանիների վերարտադրության տեխնիկան և մեթոդներն անազատ պայմաններում		6տ		54	24	30						54	
8.	Երկկենցաղների վերարտադրության տեխնիկան և մեթոդներն անազատ պայմաններում		6տ		54	20	34						54	
9.	Սողունների վերարտադրության տեխնիկան և մեթոդներն անազատ պայմաններում		6տ		72	32	40						72	
10.	Վայրի թռչունների վերարտադրության տեխնիկան և մեթոդներն անազատ պայմաններում		6տ		72	32	40						72	
11.	Վայրի կաթնասունների վերարտադրության տեխնիկան և մեթոդներն անազատ պայմաններում		6տ		72	30	42						72	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>684</b>	<b>276</b>	<b>408</b>						<b>360</b>	<b>324</b>
<b>5.</b>	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		5տ;6տ		<b>108</b>								<b>36</b>	<b>72</b>
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>				<b>44</b>						8	18	6	12
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>1944</b>	<b>820</b>	<b>970</b>	<b>2</b>			<b>504</b>	<b>468</b>	<b>540</b>	<b>432</b>
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				200									
	Շաբաթվա ժամերի քանակը										36	36	36	36

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ	
1.	Կերարտադրություն		1.	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական առարկաների	
2.			2.	Օտար լեզուների	
			3.	Բնօգտագործման էկոլոգիական հիմունքների և կենսագործունեության անվտանգության	
			4.	Կենդանաբանության	
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5.	Անհատական համակարգիչների
1.	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	3	3	6.	
2.	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	4,5,6	12	7.	
3.	Նախաավարտական	6	5	8.	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b> Երկու պետական համալիր քննություն ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից /հունիսի 15-ից հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում/				1.	Վայրի կենդանիների սննդառության և հիգիենայի
				2.	Վայրի կենդանիների անատոմիայի և ֆիզիոլոգիայի
				3.	
				<b>ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ</b>	
				1.	Կարանտինային ազատավանդակներ
				2.	Ուսումնական բուժարան
				<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>	
				1.	Մարզադահլիճ
				2.	Մարզահրապարակ

### VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ «Կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների

	<p>համար,</p> <p>2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p>



	5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</li> <li>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</li> <li>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</li> <li>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</li> <li>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</li> <li>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</li> </ol>

	7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստեատիրոջ,</li> <li>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</li> <li>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</li> </ol>

	<p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</li> <li>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն,</li> <li>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու</li> </ol>

	<p>համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «Ա Ն Վ Տ Ա Ն Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Ա Ռ Ա Ջ Ի Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների</p>

	դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից տեսական ուսուցում՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն

	<p>10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</li> <li>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</li> <li>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</li> <li>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև</p>

	անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</li> <li>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</li> <li>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</li> <li>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</li> <li>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</li> <li>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</li> <li>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</li> <li>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</li> <li>6) տարբեր կտորվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն,</li> <li>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:



<b>Ուսուցման ժամաքանակը</b>	<b>երաշխավորված</b> տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> <li>1) տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը,</li> <li>2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր,</li> <li>3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ,</li> <li>4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում,</li> <li>5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն,</li> <li>6) աշխատի համացանցում:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</li> <li>2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</li> <li>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</li> <li>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</li> <li>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</li> <li>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</li> <li>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</li> <li>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի:</p> <p>Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</li> <li>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</li> <li>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</li> <li>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,

	<p>2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն),</p> <p>4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարագրողում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,</p> <p>2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>3) գծագրում է կանոնավոր պատկերներ,</p> <p>4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>6) գծագրում է տեքստային բլոկներ,</p>

	7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:  Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	Գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</li> <li>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</li> <li>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</li> <li>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:  Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով

	<p>թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Աշխատել համացանցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է « համացանց » հասկացությունը,</li> <li>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</li> <li>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</li> <li>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</li> <li>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</li> <li>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</li> <li>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) փնտրի և գտնի աշխատանք, 2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ, 3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը,

	4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Փնտրել և գտնել աշխատանք
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</li> <li>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</li> <li>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</li> <li>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</li> <li>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքերի, կողմերի իրավունքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:</p>



<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</li> <li>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</li> <li>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</li> <li>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</li> <li>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր</p>

	հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</li> <li>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</li> <li>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</li> <li>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</li> <li>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների

	<p>գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվի հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տեսական և գործնական հիմքեր վայրի կենդանիների անատոմիական կառուցվածքի, օրգան-համակարգերի կենսագործունեության և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ, գործնական աշխատանք՝ 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) նկարագրի վայրի կենդանիների անատոմիական կառուցվածքը, 2) ներկայացնի վայրի կենդանիների օրգան-համակարգերի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, 3) բնութագրի վայրի կենդանիների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները:

<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Նկարագրել վայրի կենդանիների անատոմիական կառուցվածքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է նկարագրում անողնաշարավորների օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և առանձնահատկությունները,</li> <li>2) ճիշտ է նկարագրում երկկենցաղների օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է նկարագրում սողունների օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և առանձնահատկությունները,</li> <li>4) ճիշտ է նկարագրում վայրի թռչունների օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և առանձնահատկությունները.</li> <li>5) ճիշտ է նկարագրում վայրի կաթնասունների օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքը և առանձնահատկությունները.</li> <li>6) ճանաչում է տարբեր վայրի կենդանիների արտաքին տեսքը և տարբերակում նրանց ներքին օրգանները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցման, գործնական և թեստային առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր տարբեր վայրի կենդանիների կմախքի, մարսողական, շնչառական, սիրտ-անոթային, միզասեռական համակարգերի, մաշկի և նրա ածանցյալների, նյարդային համակարգի, ներզատիչ գեղձերի տեղագրության, անատոմիական կառուցվածքի և տեսակային առանձնահատկությունների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք տարբերակելու վայրի կենդանիներին՝ ըստ արտաքին տեսքի, ցուցադրելու ներքին օրգանների տեղադրությունը և տարբերակելու ներքին օրգաններն՝ ըստ առանձին տեսակների: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անողնաշարավոր կենդանիների օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների կմախքի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների մարսողական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների շնչառական համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների սիրտ-անոթային համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների միզասեռական համակարգի, բազմացման օրգանների կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• վայրի ողնաշարավոր կենդանիների նյարդային համակարգի և զգայարանների կառուցվածքային առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի կենդանիների կմախք, տարբեր հատվածների ոսկորներ, անատոմիական ատլասներ, մուլյաժներ, ֆորմալինում պահպանված ցուցանմուշներ, ցուցապաստառներ, համակարգիչ և համացանց, տեսացրիչ, համապատասխան տեսանյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել վայրի կենդանիների օրգան –համակարգերի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում անողնաշարավորների օրգան–համակարգերի գործառույթները և բացատրում է դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p>

	<p>2) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների օրգան-համակարգերի գործառույթները և բացատրում է դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում սողունների օրգան-համակարգերի գործառույթները և բացատրում է դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում վայրի թռչունների օրգան-համակարգերի գործառույթները և բացատրում է դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում վայրի կաթնասունների օրգան-համակարգերի գործառույթները և բացատրում է դրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր տարբեր վայրի կենդանիների մարսողական, շնչառական, սիրտ-անոթային, միզասեռական համակարգերի, մաշկի և նրա ածանցյալների, նյարդային համակարգի, ներզատիչ գեղձերի գործառույթների, ֆիզիոլոգիական և տեսակային առանձնահատկությունների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք. պատրաստել շնորհանդես՝ ներկայացնելով 1-2 օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ ըստ վայրի կենդանիների կարգաբանական խմբերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների մարսողական համակարգի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների շնչառական համակարգի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների սիրտ-անոթային համակարգի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների միզասեռական համակարգի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների մաշկի և մաշկային ծածկույթների գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների նյարդային համակարգի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների արտազատիչ և ներզատիչ գեղձերի գործառույթները և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցադրական նյութեր, տեսագրիչ: Մուլտիմեդիա աջակցություն անատոմիական և ֆիզիոլոգիական բաժինների համար:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Բնութագրել վայրի կենդանիների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բնութագրում անողնաշարավորների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները,</li> <li>2) ճիշտ է բնութագրում երկկենցաղների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները,</li> <li>3) ճիշտ է բնութագրում սողունների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները,</li> <li>4) ճիշտ է բնութագրում վայրի թռչունների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա</li> </ol>



	<p>ազդող գործոնները,</p> <p>5) ճիշտ է բնութագրում վայրի կաթնասունների աճի ու զարգացման հիմնական օրինաչափությունները և դրանց վրա ազդող գործոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր վայրի կենդանիների զարգացման և աճի ընդհանուր օրինաչափությունների, տարիքային կազմի, կենսակերպի, սննդային փոխհարաբերությունների վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի առաջադրանք ներկայացնելու վայրի կենդանիների աճի ու զարգացման օրինաչափությունների վրա ազդող հիմնական գործոնները՝ ըստ առանձին տեսակների:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• աճի և զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները կարգաբանական տարբեր խմբերի մոտ,</li> <li>• աճի ու զարգացման վրա ազդող ժառանգական գործոնները,</li> <li>• աճի ու զարգացման վրա ազդող ֆիզիոլոգիական գործոնները,</li> <li>• աճի ու զարգացման վրա ազդող արտաքին պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցապաստառներ, մեթոդական ուղեցույցեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անողնաշարավոր և ողնաշարավոր վայրի կենդանիների

	կարգաբանության և նրանց կենսաբանական առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել վայրի կենդանիներին որոշելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 28 ժամ, գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացնի ՎԿՎ-5-19-001 «Վայրի կենդանիների անատոմիա և ֆիզիոլոգիա» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի անողնաշարավոր կենդանիների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>2) ներկայացնի երկկենցաղների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>3) ներկայացնի սողունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>4) ներկայացնի վայրի թռչունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>5) ներկայացնի վայրի կաթնասունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները,</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել անողնաշարավոր կենդանիների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում միաբջիջ և բազմաբջիջ անողնաշարավոր կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների մակաբույծ կամ նրանց համար վտանգ ներկայացնող</li> </ol>

	<p>անողնաշարավոր կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները,</p> <p>4) որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում անողնաշարավոր կենդանիների կարգաբանական պատկանելությունը,</p> <p>5) ճիշտ է բնորոշում անողնաշարավոր կենդանիների առանձին կարգաբանական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անողնաշարավոր կենդանիների հիմնական խմբերի՝ միաբջիջ կենդանիների (արմատամտրակավորներ, ապիկոմպլեքսներ, միքսոսպորիդներ, միկրոսպարիդներ, ինֆուզորիաներ), սպունգների, աղեխորշավորների, տափակ որդերի (թարթիչավոր, դիգենետիկ, մոնոգենետիկ, ժապավենաձև որդեր), կլոր որդերի (ասկարիդներ, կարթորդեր, մազորդուկներ), օղակավոր որդերի (բազմախոզանավոր, սակավախոզանավոր, տզրուկներ), փափկամորթների (գլխոտանիներ, փորոտանիներ), հողվածոտանիների (խեցգետնակերպեր, խելիցերավորներ, միջատներ), փշամորթների (ծովաստղեր, ծովային ոզնիներ, ծովային վարունգներ, ծովային շուշաններ, օձապոչիկներ) կարգաբանական պատկանելության և կենսաբանական առանձնահատկությունների, ինչպես նաև վայրի կենդանիների մակաբույծների կենսաշրջանների առանձնահատկությունների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշել անողնաշարավոր կենդանիների առանձին տեսակների կարգաբանական պատկանելությունը և բնութագրել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• միաբջիջ կենդանիների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• սպունգների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• աղեխորշավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• տափակ որդերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• կլոր որդերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• հողվածոտանիների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• փշամորթների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• վայրի կենդանիների մակաբույծ անողնաշարավոր կենդանիների կենսաշրջանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է որոշում տվյալ առանձնյակի կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնութագրում նրա կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), թաց և չոր պատրաստուկներ, մուլյաժներ, անողնաշարավոր կենդանիների հավաքածուներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել երկկենցաղների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>3) որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում երկկենցաղների տեսակային պատկանելությունը,</li> <li>4) ճիշտ է բնորոշում երկկենցաղների առանձին կարգաբանական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր երկկենցաղների հիմնական խմբերի՝ պոչավոր, անպոչ և անոտ երկկենցաղների</p>

	<p>կարգաբանական պատկանելության և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշել առանձին տեսակների կարգաբանական պատկանելությունը և բնութագրել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• պոչավոր երկկենցաղների հիմնական ընտանիքները և դրանց դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• անոտ երկկենցաղների հիմնական ներկայացուցիչները և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• անպոչ երկկենցաղների հիմնական ընտանիքները և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է որոշում տվյալ առանձնյակի կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնութագրում նրա կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), թաց պատրաստուկներ, մուլյաժներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել սողունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում սողունների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում սողունների կենսաբանական առանձնահատկությունները,</p>

	<p>3) որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում սողունների տեսակային պատկանելությունը,</p> <p>4) ճիշտ է բնորոշում սողունների առանձին կարգաբանական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր սողունների հիմնական խմբերի՝ կոնգալիսավորների (հատտերիա), թեփուկավորների (օձեր, մողեսներ, ամֆիսբեններ, քամելեոններ), կոկորդիլոսների (գավիալներ, իսկական կոկորդիլոսներ, ալիգատորենր, կայմաններ), կրիաների (գաղտնիպարանոցավոր կրիաներ, կողքապարանոց կրիաներ) կարգաբանական պատկանելության և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշել առանձին տեսակների կարգաբանական պատկանելությունը և բնութագրել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• կոնգալիսավորների ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• թեփուկավորների հիմնական ընտանիքները և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները</li> <li>• կրիաների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• կոկորդիլոսների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է որոշում տվյալ առանձնյակի կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնութագրում նրա կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), թաց պատրաստուկներ, մուլյաժներ, խրտվիլակներ:</p>

<b>Ուսուցման ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել վայրի թռչունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում թռչունների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը, 2) ճիշտ է ներկայացնում վայրի թռչունների կենսաբանական առանձնահատկությունները, 3) որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում վայրի թռչունների տեսակային պատկանելությունը, 4) ճիշտ է բնորոշում թռչունների առանձին կարգաբանական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր թռչունների հիմնական խմբերի՝ անողնուցավորների (աֆրիկական, ավստրալիական և ամերիկյան ջայլամներ, կիվիներ, տինամուներ), պինգվինների, սուզակակերպերի, արագիլակերպերի, կռունկակերպերի, հավակերպերի, թիակաոտավորների, բազեակերպերի, բվակերպերի, սագակերպերի, ֆլամինգոակերպերի, քարադրակերպերի, ներկակարակերպերի, ճնճուկակերպերի, թուֆակերպերի, փայտփորակերպերի կարգաբանական և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշել առանձին տեսակների կարգաբանական պատկանելությունը և բնութագրել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անողնուցավորների թռչունների կարգաբանական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• պինգվինների կարգաբանական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• սուզակակերպերի կարգաբանական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական</li> </ul>

առանձնահատկությունները,

- արագիլակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- կռունկակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- հավակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- թիակառտավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- բազեակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- բվակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- սագակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- ֆլամինգոակերպերի տեսակները և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,
- քարադրակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- ներկակարակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց առանձին ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- ճնճղուկակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց առանձին ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- թուփակակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական



	<p>առանձնահատկությունները,</p> <ul style="list-style-type: none"> <li>փայտփորակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է որոշում տվյալ առանձնյակի կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնութագրում նրա կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), մուլյաժներ, խրտվիլակներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել վայրի կաթնասունների կարգաբանությունը և կենսաբանական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>ճիշտ է ներկայացնում կաթնասունների դասակարգման հիմնական սկզբունքները և կարգաբանական հիմնական խմբերը,</li> <li>ճիշտ է ներկայացնում վայրի կաթնասունների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>որոշիչների օգնությամբ ճիշտ է որոշում կաթնասունների տեսակային պատկանելությունը,</li> <li>ճիշտ է բնորոշում կաթնասունների առանձին կարգաբանական խմբերի կենսաբանական առանձնահատկությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կաթնասունների հիմնական խմբերի՝ միանցքավորների, պարկավորների, միջատակերների, թերատամնավորների, ձեռնաթևավորների, գիշատիչների, կնճիթավորների, կենտսմբակավորների, զուգսմբակավորների, կոշտուկոտավորների, կիսակապիկների, իսկական կապիկների,

կետակերպերի, թիառտավորների, սիրենների, կրծողների կարգաբանական և կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշել առանձին տեսակների կարգաբանական դիրքը և բնութագրել դրանց կենսաբանական առանձնահատկությունները:

Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.

- միանցքավորների կամ նախագագանների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- պարկավոր կաթնասունների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- միջատակերների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- թերատամնավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- ձեռնաթևավորների կամ բազկաթևավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- գիշատիչների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- կնճիթավորների տեսակները և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,
- կենտսմբակավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- զույգսմբակավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,
- կոշտուկոտավորների տեսակները և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,

	<ul style="list-style-type: none"> <li>• կիսակապիկների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• իսկական կապիկների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• կետակերպերի կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• թիատավորների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• սիրենների կամ ծովակովերի տեսակները և դրանց կենսաբանական առանձնահատկությունները,</li> <li>• կրծողների կարգաբանական հիմնական խմբերը և դրանց ներկայացուցիչների կենսաբանական առանձնահատկությունները,</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է որոշում տվյալ առանձնյակի կարգաբանական պատկանելությունը և ճիշտ է բնութագրում նրա կենսաբանական առանձնահատկությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), մուլյաժներ, խրտվիլակներ:
<b>Ուսուցման ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ վայրի կենդանիների և միջավայրի փոխհարաբերության

	<p>ընդհանուր օրինաչափությունների, վայրի կենդանատեսակների էկոլոգիական հավասարակշռությանը սպառնացող բնական և մարդածին վտանգների, վայրի կենդանիների պահպանության հիմնախնդիրների մասին, ինչպես նաև ձևավորել վայրի կենդանատեսակների կենսաբազմազանության պահպանության և էկոլոգիական խնդիրների լուծման կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 26 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ սեմինար պարապմունք՝ 20 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՎԿՎ-5-19-002 «Վայրի կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները» մոդուլը:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի վայրի կենդանիների և միջավայրի փոխհարաբերության ընդհանուր օրինաչափությունները,</li> <li>2) կազմակերպի վայրի կենդանիների տեսակներին սպառնացող վտանգների նվազեցման միջոցառումներ,</li> <li>3) սռաջարկի կենդանիների կենսաբազմազանության պահպանության և էկոլոգիական խնդիրների լուծման</li> <li>4) ներկայացնի վայրի կենդանիների պահպանության հիմնախնդիրները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել վայրի կենդանիների և միջավայրի փոխհարաբերությունների ընդհանուր օրինաչափությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև եղած փոխադարձ կապերը,</li> <li>2) ճիշտ է նկարագրում միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունների դրսևորման ձևերը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում միջավայրի ազդեցությունը կենդանիների կենսակերպի վրա:</li> </ol>

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և/կամ թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր կամ առվազն 30 հարցից կազմված թեստ կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև եղած փոխադարձ կապերի, միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունների դրսևորման ձևերի, կենդանիների կենսակերպի վրա միջավայրի ազդեցության վերաբերյալ իմացությունը բացահայտելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• կենդանի օրգանիզմների և միջավայրի միջև եղած փոխադարձ կապերը,</li> <li>• վայրի կենդանիների միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունների դրսևորման ձևերը,</li> <li>• վայրի կենդանիների կենսակերպի վրա միջավայրի ազդեցության առանձնահատկությունները:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և/կամ առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր /ցուցապաստառներ, սխեմաներ, տեսանյութեր/:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, սեմինար պարապմունք՝ 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Կազմակերպել վայրի կենդանիների տեսակներին սպառնացող վտանգների նվազեցման միջոցառումներ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում բնական աղետների ազդեցությունը վայրի կենդանիների կենսակերպի վրա,</li> <li>2) ճիշտ է բնութագրում մարդածին վտանգների ազդեցությունը վայրի կենդանիների կենսակերպի վրա,</li> <li>3) ճիշտ է կազմակերպում մարդածին վտանգների դեմ պայքարի նվազեցման միջոցառումները,</li> <li>4) ճիշտ է կազմակերպում բնական աղետների կանխարգելման առաջնային միջոցառումները:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր և առվազն 20 հարցից կազմված թեստ վայրի կենդանիների կենսակերպի բնական աղետների և մարդածին</p>

	<p>վտանգների ազդեցության և դրանց դեմ պայքարի ու կանխարգելիչ առաջնային միջոցառումների վերաբերյալ իմացությունը բացահայտելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• բնական աղետների ազդեցությունը անողնաշարավորների, երկկենցաղների, սողունների, վայրի թռչունների, վայրի կաթնասունների կենսակերպի վրա և դրանց ազդեցությունը նվազեցնող կամ կանխարգելիչ միջոցառումները,</li> <li>• մարդկային արտադրական գործունեության վտանգավոր ազդեցությունը վայրի կենդանիների կենսակերպի վրա:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր /ցուցապաստառներ, սխեմաներ, տեսանյութեր/, վարժանքներ իրականացնելու գործիքներ, սարքավորումներ, արտահագուստ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Առաջարկել կենդանիների կենսաբազմազանության պահպանության և էկոլոգիական խնդիրների լուծման ձևեր</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների բազմազան և զարգացման ընդհանուր օրինաչափությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում սեռերի հարաբերակցությունը պոպուլյացիայում,</li> <li>3) ճիշտ է բնութագրում կենսաբազմազանության պահպանության գործում սերնդի նկատմամբ խնամքը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում կենդանիների արտակազմվածքի /էքստերիերի/ և աճի ընդհանուր օրինաչափությունները,</li> </ol>

	5) ճիշտ է մշակում և կիրառում էկոլոգիական խնդիրների լուծման միջոցառումների պլանը:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և/կամ թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր և առվազն 20 հարցից կազմված թեստ վայրի կենդանիների բազմացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունների, պոպուլյացիաներում սեռերի բարենպաստ հարաբերակցության, կենսաբազմազանության պահպանության, արտակազմվածքի /էքստերիերի/ և աճի ընդհանուր օրինաչափությունների իմացության և էկոլոգիական խնդիրների լուծման միջոցառումների պլան կազմելու ունակության վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների բազմացման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները,</li> <li>• վայրի կենդանիների պոպուլյացիաներում սեռերի բարենպաստ հարաբերակցությունը,</li> <li>• կենսաբազմազանության պահպանության մոտեցումները,</li> <li>• վայրի կենդանիների արտակազմվածքի /էքստերիերի/ և աճի ընդհանուր օրինաչափությունները,</li> <li>• էկոլոգիական խնդիրների լուծման միջոցառումները:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին, կազմում է էկոլոգիական խնդիրների լուծման միջոցառումների օպտիմալ պլան:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր /ցուցապաստառներ, սխեմաներ, տեսանյութեր/, էլեկտրոնային տեխնիկական միջոցներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ, սեմինար պարապմունք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք</b>	Ներկայացնել վայրի կենդանիների պահպանության հիմնախնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում անազատ և կիսազատ պայմաններում վայրի կենդանիների պահելու կարգը՝ ըստ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի և միջազգային կոնվենցիաների,

	<p>2) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների ներմուծման, արտահանման, առևտրի տեղական և միջազգային օրենսդրական կարգավորումները և դրանց հետ կապված ձևաթղթերը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում անհետացող վայրի կենդանիների առևտրի միջազգային կոնվենցիայի / CITES/ դրույթները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված կենդանիների, դրանց պահպանման և վերականգման միջոցառումները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում ԲՊՄՄ /Բնության Պահպանության Միջազգային Միության/ «Կարմիր ցուցակում» գրանցված կենդանիների, դրանց պահպանման և վերարտադրման միջոցառումները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և/կամ թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր և առվազն 20 հարցից կազմված թեստ՝ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի և միջազգային կոնվենցիաների անազատ և կիսազատ պայմաններում վայրի կենդանիների պահելու կարգի, վայրի կենդանիների ներմուծման, արտահանման, առևտրի տեղական և միջազգային օրենսդրական կարգավորումների և դրանց հետ կապված ձևաթղթերի, վայրի կենդանիների առևտրի միջազգային կոնվենցիայի /CITES/ դրույթների, ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված կենդանիների, դրանց պահպանման և վերականգման միջոցառումների, ԲՊՄՄ /Բնության Պահպանության Միջազգային Միության/ «Կարմիր ցուցակում» գրանցված կենդանիների, դրանց պահպանման և վերարտադրման միջոցառումների վերաբերյալ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի և միջազգային կոնվենցիաների անազատ և կիսազատ պայմաններում վայրի կենդանիների պահելու կարգը,</li> <li>• վայրի կենդանիների ներմուծման, արտահանման, առևտրի տեղական և միջազգային օրենսդրական կարգավորումները և դրանց հետ կապված ձևաթղթերը,</li> <li>• անհետացող վայրի կենդանիների առևտրի միջազգային կոնվենցիան /CITES/,</li> <li>• ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված կենդանիների, դրանց պահպանման և վերականգման միջոցառումները:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի</p>



	ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և սեմինար պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր /ցուցապաստառներ, սխեմաներ, տեսանյութեր/, մասնագիտական գրականություն, նորմատիվ փաստաթղթեր, էլեկտրոնային տեխնիկական միջոցներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ, սեմինար պարապմունք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ անազատության մեջ գտնվող կենդանիների հետ աշխատելու անվտանգության կանոնակարգի վերաբերյալ, ինչպես նաև այդ գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացնի ՎԿՎ-5-19-002 «Վայրի կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) ներկայացնի անողնաշարավոր կենդանիների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները, 2) ներկայացնի երկկենցաղների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,

	<p>3) ներկայացնել սողունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</p> <p>4) ներկայացնի թռչունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</p> <p>5) ներկայացնի կաթնասունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել անողնաշարավոր կենդանիների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների հետ ամենօրյա աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների տեղափոխման անվտանգության կանոնները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների փախուստի ընթացքում իրականացվող միջոցառումների անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է որոշում անողնաշարավոր կենդանիների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր անողնաշարավոր կենդանիների հետ աշխատելու, տեղափոխման և արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանման, անողնաշարավոր կենդանիների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք. ցուցադրել կենդանու ֆիքսումը մույաժների վրա՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անողնաշարավոր կենդանիների հետ աշխատելու անվտանգության կանոնները,</li> <li>• անողնաշարավոր կենդանիների ֆիքսման ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>անողնաշարավոր կենդանիների հետ աշխատելու անվտանգության կանոններն արտակարգ իրավիճակներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդեր, ուղեցույցեր, նորմատիվային փաստաթղթեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել երկկենցաղների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների հետ ամենօրյա աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների տեղափոխման անվտանգության կանոնները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների փախուստի ընթացքում իրականացվող միջոցառումների անվտանգության կանոնները,</li> <li>4) ճիշտ է որոշում երկկենցաղների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր երկկենցաղների հետ աշխատելու, տեղափոխման և արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանման, երկկենցաղների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք. ցուցադրել կենդանու ֆիքսումը մուլյաժների վրա՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• երկկենցաղների հետ աշխատելու անվտանգության կանոնները,</li> <li>• երկկենցաղների ֆիքսման ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>• երկկենցաղների հետ աշխատելու անվտանգության կանոններն արտակարգ իրավիճակներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնամեթոդական գրականություն, կենդանիների մուլյաժներ, համապատասխան գործիքներ և սարքավորումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել սողունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում սողունների հետ ամենօրյա աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում սողունների տեղափոխման անվտանգության կանոնները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում սողունների փախուստի ընթացքում իրականացվող միջոցառումների անվտանգության կանոնները,</li> <li>4) ճիշտ է որոշում սողունների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր սողունների հետ աշխատելու, տեղափոխման և արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանման, սողունների կացարաններին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք ցուցադրել կենդանու ֆիքսումը մուլյաժների վրա՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p>

	<ul style="list-style-type: none"> <li>• սողունների հետ աշխատելու անվտանգության կանոնները,</li> <li>• սողունների ֆիքսման ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>• սողունների հետ աշխատելու անվտանգության կանոններն արտակարգ իրավիճակներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնամեթոդական գրականություն, կենդանիների ուլյաժներ, համապատասխան գործիքներ և սարքավորումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել թռչունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում թռչունների հետ ամենօրյա աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում թռչունների տեղափոխման անվտանգության կանոնները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում թռչունների փախուստի ընթացքում իրականացվող միջոցառումների անվտանգության կանոնները,</li> <li>4) ճիշտ է որոշում թռչունների վանդակների, ազատավանդակների և բների նկատմամբ ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջները:</li> </ol>
<b>Փնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր թռչունների հետ աշխատելու, տեղափոխման և արտակարգ իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանման, թռչունների վանդակների, ազատավանդակների և բների նկատմամբ ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք. ցուցադրել կենդանու ֆիքսումը մուլյաժների վրա՝ պահպանելով աշխատանքի անվտանգության</p>

	<p>կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• թռչունների հետ աշխատելու անվտանգության կանոնները,</li> <li>• թռչունների ֆիքսման ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>• թռչունների հետ աշխատելու անվտանգության կանոններն արտակարգ իրավիճակներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնամեթոդական գրականություն, կենդանիների մուլյաժներ, համապատասխան գործիքներ և սարքավորումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Ներկայացնել կաթնասունների հետ աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում կաթնասունների հետ ամենօրյա աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոնները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում կաթնասունների տեղափոխման անվտանգության կանոնները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում կաթնասունների փախուստի ընթացքում իրականացվող միջոցառումների անվտանգության կանոնները,</li> <li>4) ճիշտ է որոշում կաթնասունների ազատավանդակների նկատմամբ ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր կաթնասունների հետ աշխատելու, տեղափոխման և արտակարգ</p>

	<p>իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանման, կաթնասունների ազատավանդակներին ներկայացվող անվտանգության նորմատիվային պահանջների վերաբերյալ: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք. ցուցադրել կենդանու ֆիքսումը մուլյաժների վրա՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• կաթնասունների հետ աշխատելու անվտանգության կանոնները,</li> <li>• կաթնասունների ֆիքսման ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները,</li> <li>• կաթնասունների հետ աշխատելու անվտանգության կանոններն արտակարգ իրավիճակներում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնամեթոդական գրականություն, կենդանիների մուլյաժներ, համապատասխան գործիքներ և սարքավորումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՈՀԻԳԻԵՆԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ- 5-19-005
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ վայրի կնդանատեսակների հիվանդությունների, դրանց հայտնաբերման, կանխարգելման միջոցառումների և զոոհիգիենայի առանցքային հասկացությունների մասին, ինչպես նաև ձևավորել որոշակի գործնական հմտություններ այդ գիտելիքները հետագա մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու համար:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 18 ժամ, գործնական աշխատանք՝ 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՎԿՎ-5-19-001 «Վայրի կենդանիների անատոմիա և ֆիզիոլոգիա» և ՎԿՎ- 5-19-004 «Վայրի կենդանիների հետ աշխատանքի անվտանգության ապահովում» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի անասնաբուժության խնդիրները և հիմնական հասկացությունները,</li> <li>2) արտաքին նշաններով գնահատի վայրի կենդանիների առողջական վիճակը,</li> <li>3) կատարի անասնաբուժական պարզ գործողություններ,</li> <li>4) ապահովի զոոհիգիենայի պահանջների պահպանությունը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել անասնաբուժության խնդիրները և հիմնական հասկացությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է հիմնավորում անասնաբուժական միջոցառումների անհրաժեշտությունը,</li> <li>2) ճիշտ է մեկնաբանում վայրի կենդանիների անասնաբուժության առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների հիվանդությունների պատճառները, կլինիկական նշանները և հետևանքները,</li> <li>4) ճիշտ է պարզաբանում հիվանդությունների դեմ պայքարի ձևերը և միջոցները,</li> <li>5) ճիշտ է տարբերակում վայրի կենդանիների հիվանդությունների հարուցիչների տեսակները,</li> <li>6) հիմնավորում է պլանավորված կանխարգելիչ միջոցառումների կարևորությունը,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում անասնաբույժի ցուցումով կատարվող գործողությունների ցանկը,</li> <li>8) ճիշտ է նկարագրում անասնաբուժական միջամտության համար օգտագործվող սարքավորումները և գործիքները:</li> </ol>



<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարցման, գործնական և թեստային առաջադրանքների միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր վայրի կենդանիների առավել տարածված հիվանդությունների, դրանց առաջացման պատճառների, կլինիկական նշանների, դրանց բուժման և կանխարգելման նպատակով կազմակերպվող անասնաբուժասանիտարական միջոցառումների, անասնաբուժական միջամտության համար կիրառվող սարքավորումների և գործիքների մասին: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք մանրադիտակի և մանրէաբանական պատրաստուկների միջոցով տարբերակել վարակիչ հիվանդությունների հարուցիչները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների ոչ վարակիչ հիվանդությունները, դրանց բուժման և կանխարգելման միջոցառումները,</li> <li>• վայրի կենդանիների վարակիչ հիվանդությունները, դրանց բուժման և կանխարգելման միջոցառումները,</li> <li>• վայրի կենդանիների ինվազիոն հիվանդությունները, դրանց բուժման և կանխարգելման միջոցառումները,</li> <li>• զոոանտրոպոնոզ հիվանդությունների ընդհանուր բնութագիրը և կանխարգելման միջոցառումները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը հանձնարարված առաջադրանքները կատարում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, մեթոդական և տեղեկատու գրականություն, պաստառներ, գունավոր սլայդեր, մանրէաբանական լաբորատորիայի սարքավորումներ, մանրադիտակ, լաբորատոր կենդանիներ, գործիքներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Արտաքին նշաններով գնահատել վայրի կենդանիների առողջական վիճակը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ակնադիտական եղանակով ուսումնասիրում է վայրի կենդանիների վարքագիծը,</li> <li>2) արձանագրում է կենդանիների արտաքին տեսքի փոփոխությունները,</li> <li>3) համադրելով արտաքին նշանները՝ գնահատում է վայրի կենդանիների առողջական վիճակը:</li> </ol>

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով, որի ժամանակ ուսանողին կտրվեն հարցեր տարբեր վայրի կենդանիների հիվանդությունների հայտնաբերման մեթոդների, հիվանդ կենդանիների վարքագծի փոփոխությունների, հիվանդությունների արտաքին նշանների, դրանց վաղ հայտնաբերմանը ուղղված մեթոդների վերաբերյալ: Ուսանողին տրվելու է գործնական առաջադրանք արտաքին որոշակի նշանների հիման վրա գնահատել կենդանու առողջական վիճակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների առավել տարածված հիվանդություններին բնորոշ արտաքին նշանները,</li> <li>• վայրի կենդանիների առավել տարածված հիվանդությունների ընթացքը,</li> <li>• արտաքին տեսքով կենդանու հիվանդության մասին եզրակացության հնարավորությունը և դրա գործնական կիրառման կարևորությունը,</li> <li>• հիվանդ կենդանիների արտաքին տեսքի փոփոխությունների արձանագրում և կիրառում,</li> <li>• կենդանու առողջական վիճակի գնահատումն՝ ըստ վարքագծի փոփոխության և մի քանի արտաքին նշանների համադրության:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում ճիշտ, թույլատրելի են ոչ էական թերություններ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի յուրացումը իրականացվում է տեսական և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, ուսումնամեթոդական գրականություն, տեսաֆիլմեր, գունավոր սլայդեր, կենդանիների մուլյաժներ, տեսաֆիլմեր, տեսագրիչ, համացանց:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Կատարել անասնաբուժական պարզ գործողություններ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է ներկայացնում անասնաբուժական պարզագույն գործողությունները և կիրառում,</p>

	<p>2) ճանաչում է յուրաքանչյուր նշանակման համար օգտագործվող դեղամիջոցները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում դեղամիջոցի ազդեցության դրսևորումները,</p> <p>4) պահպանում է սանիտարահիգիենիկ նորմերը պարզագույն անասնաբուժական գործողություններ կատարելիս,</p> <p>5) ճիշտ է պահեստավորում օգտագործված միջոցների տարրաները և թափոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անասնաբուժական միջոցառումների կազմակերպման և իրականացման վերաբերյալ: Ուսանողին հանձնարարվելու է կատարել ոչ պակաս 5 անասնաբուժական պարզ գործողություն: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք տարբերակելու դեղամիջոցները և ներկայացնելու դրանց ազդեցության մեխանիզմները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անասնաբուժական պարզ գործողությունների տեսակները և իրականացման մանրամասները,</li> <li>• դեղամիջոցների օգտագործման նորմաները և դեղամիջոցի ազդեցության դրսևորումները,</li> <li>• անասնաբուժական պարզ գործողությունների ժամանակ պահպանվող սանիտարական պայմանները, դեղամիջոցների, օգտագործված միջոցների տարրաների և թափոնների պահեստավորման կարգը,</li> <li>• դեղամիջոցների ստացման և օգտագործման հաշվառումը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցապաստառներ, մեթոդական ուղեցույցեր, դեղերի նմուշներ, անասնաբուժական գործիքներ և սարքավորումներ, լաբորատոր կենդանիներ, անասնաբուժական ուղեցույցեր</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ապահովել զոոհիգիենայի պահանջների պահպանությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների հիգիենայի հիմունքներն ու նորմերը,</p>

	<p>2) ճիշտ է ներկայացնում վայրի կենդանիների պահվածքի և խնամքի նորմերը,</p> <p>3) պահպանում է կերակրման ժամանակ կերերի նկատմամբ ներկայացվող սանիտարահիգիենիկ նորմերը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում լվացող և ավստահանող նյութերի տեսակները, դրանց օգտագործման կարգն ու պահպանման պայմանները,</p> <p>5) ճիշտ է բնութագրում վայրի կենդանիների հիգիենայի պարագաներն ու դրանց ներկայացվող պահանջները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը վայրի կենդանիների օրգանիզմի վրա,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում բնակլիմայական գործոնների և միկրոկլիմայի ազդեցությունը վայրի կենդանիների օրգանիզմի վրա:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստային առաջադրանքների միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է վայրի կենդանիների զոոհիգիենայի պահանջների պահպանության առանցքային հասկացությունների ճիշտ մեկնաբանման ուսանողի կարողությունները, իսկ հարց ու պատասխանի միջոցով պարզաբանվում են այդ հասկացությունների հետ կապված տեսական հարցերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների հիգիենայի հիմունքներն ու նորմաները,</li> <li>• վայրի կենդանիների պահվածքի և խնամքի նորմերը,</li> <li>• ազատավանդակների, տերարիումների, ակվարիումների, բների չափերը, տեղը, դիրքը, լուսավորությունը,</li> <li>• կերամանների, ջրամանների մաքրությանը, ջրի թարմությանը ներկայացվող պահանջները,</li> <li>• լվացող և ավստահանող նյութերի տեսակները, դասակարգումը, օգտագործման կարգն ու պահման պայմանները,</li> <li>• բնակլիմայական պայմանների, արտաքին միջավայրի գործոնների և միկրոկլիմայի ազդեցությունը վայրի կենդանիների կենսակերպի վրա:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում ճիշտ, թույլատրելի</p>

	են ոչ էական թերություններ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցապաստառներ, մեթոդական ուղեցույցեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱՆՐԷԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ մանրէների ընդհանուր բնութագրի, դասակարգման, տեղակայման, մանրէազրկման աշխատանքներին ներկայացվող խնդիրների ու պահանջների մասին, ինչպես նաև ձևավորել մանրադիտակային և այլ տեխնիկայով աշխատելու, մանրէակենսաբանական փորձանմուշներ հավաքելու, դրանք մշակելու և մանրէներին որոշելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ, գործնական պարապմունք՝ 16 ժամ սեմինար պարապմունք՝ 2 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի մանրէների և դրանց առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը, 2) ներկայացնի մանրէների որոշման գործընթացները և դրանց ներկայացվող պահանջները, 3) իրականացնի մանրէազերծման գործողություններ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մանրէների և դրանց առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մանրէների դասակարգումն ու կարգաբանության սկզբունքները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մանրէների ձևաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մանրէների էկոլոգիական առանձնահատկությունները և արտաքին միջավայրում միկրոֆլորայի ձևավորման պայմանները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում տարածված հիվանդածին մանրէները, դրանց առաջացրած հիվանդությունները և դրանց դեմ պայքարի հիմնական միջոցները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և/կամ թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր կամ առվազն 20 հարցից կազմված թեստ մանրէների կարգաբանական խմբերի, դրանց ձևաբանության և կառուցվածքի, էկոլոգիական առանձնահատկությունների, ինչպես նաև առանձին մանրէների առաջացրած հիվանդությունների ու դրանց դեմ պայքարի միջոցների վերաբերյալ իմացությունը բացահայտելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• մանրէների դասակարգման ժամանակակից մոտեցումները,</li> <li>• մանրէների ձևաբանական և կառուցվածքային առանձնահատկությունները,</li> <li>• մանրէների էկոլոգիական առանձնահատկությունները և արտաքին միջավայրում միկրոֆլորայի ձևավորման պայմանները,</li> <li>• առավել տարածված հիվանդածին մանրէները ու դրանց առաջացրած հիվանդությունները,</li> <li>• ախտածին մանրէների դեմ պայքարի միջոցները:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և/կամ առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական, գործնական և սեմինար պարապմունքների կիրառման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապաստառներ, սխեմաներ կամ այլ ցուցադրական նյութեր, մանրադիտակներ, մանրէների պրեպարատներ, մասնագիտական և տեղեկատու գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ,  գործնական պարապմունք՝ 4 ժամ  սեմինար պարապմունք՝ 2 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել մանրէների որոշման գործընթացները և դրանց ներկայացվող պահանջները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է իրականացնում մանրէակենսաբանական նյութի նմուշարկումը և պրեպարատների պատրաստումը,</li> <li>2) ճիշտ է շահագործում մանրէակենսաբանական նմուշների դիտարկման համար անհրաժեշտ սարքավորումները,</li> <li>3) ճիշտ է ավտահանում և ստերիլացնում օգտագործված գործիքները և սարքավորումները,</li> <li>4) ճիշտ է որոշում մանրէների կարգաբանական պատկանելությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր և առնվազն 20 հարցից կազմված թեստ՝ մանրէակենսաբանական նյութի նմուշարկման և համապատասխան պրեպարատների պատրաստման, մանրէակենսաբանական նմուշների դիտարկման համար անհրաժեշտ սարքավորումների, օգտագործված գործիքների և սարքավորումների ավտահանման և ստերիլացման, մանրէների կարգաբանական պատկանելության վերաբերյալ իմացությունը և գործնական կարողությունները բացահայտելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• մանրէակենսաբանական նյութի նմուշարկման և համապատասխան պրեպարատների պատրաստման մեթոդները,</li> <li>• մանրէակենսաբանական նմուշների դիտարկման համար անհրաժեշտ սարքավորումների, օգտագործված</li> </ul>

	<p>գործիքների և սարքավորումների ախտահանման և ստերիլացման պայմանները,</p> <ul style="list-style-type: none"> <li>մանրէների կարգաբանական պատկանելությունը:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և/կամ առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին և ճիշտ է ախտահանում օգտագործված գործիքները և սարքավորումները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապաստառներ, սխեմաներ կամ այլ ցուցադրական նյութեր, մանրադիտակներ, ախտահանման և ստերիլացման գործիքներ, ախտահանիչ լուծույթներ, որոշիչներ, մասնագիտական և տեղեկատու այլ գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Իրականացնել մանրէազերծման գործողություններ</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում արտաքին միջավայրի կենսաբանական, քիմիական և ֆիզիկական գործոնների ազդեցությունը մանրէների կենսագործունեության վրա,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մանրէների զգայունակությունը հակաբիոտիկների նկատմամբ,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում ախտահանիչների ազդեցությունը ախտածին և վիրուլենտ մանրէների վրա,</li> <li>4) ճիշտ է կատարում մանրէազերծման աշխատանքները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստի միջոցով: Ուսանողին տրվելու են հարցեր և առվազն 20 հարցից կազմված թեստ մանրէների կենսագործունեության վրա արտաքին միջավայրի կենսաբանական, քիմիական և ֆիզիկական գործոնների ազդեցության, հակաբիոտիկների նկատմամբ մանրէների զգայունակության, ախտածին և վիրուլենտ մանրէների վրա ախտահանիչների ազդեցության, մանրէազերծման աշխատանքների իրականացման վերաբերյալ իմացությունը և գործնական կարողությունները բացահայտելու համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p>



	<ul style="list-style-type: none"> <li>մանրէների կենսագործունեության վրա արտաքին միջավայրի կենսաբանական, քիմիական և ֆիզիկական գործոնները,</li> <li>հակաբիոտիկների նկատմամբ մանրէների զգայունակությունը,</li> <li>ախտածին և վիրուլենտ մանրէների վրա ախտահանիչների ազդեցությունը,</li> <li>մանրէազերծման աշխատանքների իրականացումը:</li> </ul> <p>Ուսանողի կողմից արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է պատասխանում հարցերին, որի ընթացքում թույլատրելի են ոչ էական բացթողումներ և թերություններ, և/կամ առնվազն 90 տոկոսով ճիշտ է պատասխանում թեստի հարցերին և ճիշտ է կատարում մանրէազերծման աշխատանքները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցապաստառներ, սխեմաներ կամ այլ ցուցադրական նյութեր, ախտահանիչ լուծույթներ, պաշտպանիչ արտահագուստ, մասնագիտական և տեղեկատու այլ գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	Տեսական ուսուցում՝ 6 ժամ, Գործնական պարապմունք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին հաղորդել գիտելիքներ վայրի կենդանիների կերակրման, խնամքի և վերարտադրության ժամանակ կիրառվող գործիքների, սարքավորումների, մեկանգամյա օգտագործման նյութատեխնիկական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել դրանք կիրառելու և շահագործելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ, որից տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-005 «Անասնաբուժության և զոոհիգիենայի հիմունքներ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) շահագործի վայրի կենդանանիների խնամքի և կերակրման աշխատանքներում կիրառվող գործիքները և սարքավորումները,</li> <li>2) կիրառի վայրի կենդանիների հետ աշխատանքներում միանգամյա օգտագործման նյութատեխնիկական միջոցները,</li> <li>3) շահագործի վայրի կենդանիների վերարտադրման աշխատանքներում կիրառվող գործիքները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Շահագործել վայրի կենդանանիների խնամքի և կերակրման աշխատանքներում կիրառվող գործիքները և սարքավորումները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործիքների և սարքավորումների տեսակները և բնութագրում դրանց օգտագործման առանձնահատկությունները,</li> <li>2) նախապատրաստում է մասնագիտական գործիքները և սարքավորումները շահագործման՝ պահպանելով անվտանգության կանոնները,</li> <li>3) կիրառում է մասնագիտական գործիքները և սարքավորումները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում գործիքների և սարքավորումների պահպանման կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել վայրի կենդանիների խնամքի և կերակրման աշխատանքներում կիրառվող հիմնական մասնագիտական գործիքները և սարքավորումները, դրանց նշանակությունը և

	<p>դերակատարումը, գործիքների և սարքավորումների պահպանման կանոնները, բնութագրել գործիքների և սարքավորումների օգտագործման առանձնահատկությունները, ինչպես նաև կատարել մասնագիտական գործիքների և սարքավորումների գործարկման նախապատրաստական աշխատանքներ: Կառաջադրվի նաև կատարել պարզագույն անսարքությունների վերացման աշխատանքներ, շահագործել որոշ գործիքներ և սարքավորումներ՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կենդանիների խնամքի և կերակրման գործընթացում կիրառվող մասնագիտական գործիքների և սարքավորումները ընդհանուր բնութագիրը և նշանակությունը,</li> <li>• մասնագիտական գործիքների և սարքավորումների շահագործմանը ներկայացվող նորմատիվային պահանջները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ, մասնագիտական գործիքների և սարքավորումների նմուշներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Կիրառել վայրի կենդանիների հետ աշխատանքներում միանգամյա օգտագործման նյութատեխնիկական միջոցները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բնութագրում միանգամյա օգտագործվող նյութատեխնիկական միջոցները,</li> <li>2) ճիշտ է ընտրում և նախապատրաստում միանգամյա օգտագործվող նյութատեխնիկական միջոցները,</li> <li>3) ճիշտ է կիրառում այդ միջոցները աշխատանքային գործընթացում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով:</p>

	<p>Ուսանողին կհանձնարարվի բնութագրել վայրի կենդանիների հետ աշխատանքներում կիրառվող միանգամյա օգտագործման նյութատեխնիկական միջոցները: Ուսանողին կհանձնարարվի նաև ընտրել, նախապատրաստել և կիրառել միանգամյա օգտագործվող նյութատեխնիկական միջոցները՝ ըստ համապատասխան աշխատանքային գործընթացի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• միանգամյա օգտագործվող նյութատեխնիկական միջոցների ընդհանուր բնութագիրը և նշանակությունը,</li> <li>• միանգամյա օգտագործվող նյութատեխնիկական միջոցներին ներկայացվող նորմատիվային պահանջները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական և գործնական պարապունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, աշխատանքային գործընթացում կիրառվող միանգամյա օգտագործման նյութատեխնիկական միջոցների ցուցանմուշներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Շահագործել վայրի կենդանիների վերարտադրման աշխատանքներում կիրառվող գործիքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում վերարտադրության ժամանակ օգտագործվող գործիքների և սարքավորումների տեսակները, բնութագրում օգտագործման առանձնահատկությունները,</p> <p>2) նախապատրաստում է վերարտադրման աշխատանքներում կիրառվող մասնագիտական գործիքները և սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները,</p> <p>3) կիրառում է գործիքները և սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել վայրի կենդանիների վերարտադրման աշխատանքներում կիրառվող</p>

	<p>հիմնական մասնագիտական գործիքները, դրանց նշանակությունը և դերակատարումը, գործիքների պահպանման կանոնները, բնութագրել դրանց օգտագործման առանձնահատկությունները և կիրառման անվտանգության կանոնները: Ուսանողին կտրվի գործնական առաջադրանք՝ նախապատրաստել մասնագիտական գործիքները, ցուցադրել դրանց շահագործման եղանակները մուլյաժների վրա :</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>վայրի կենդանիների վերարտադրման աշխատանքներում կիրառվող մասնագիտական գործիքների ընդհանուր բնութագիրը և նշանակությունը,</li> <li>մասնագիտական գործիքների շահագործմանը ներկայացվող նորմատիվային պահանջները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցապաստառներ, մեթոդական ուղեցույցեր, մասնագիտական գործիքներ, մուլյաժներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-008
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անազատ պայմաններում պահվող անողնաշարավորների խնամքի և կերակրման մեթոդների մասին, ինչպես նաև նրա մոտ ձևավորել գործնական հմտություններ այդ մեթոդները կիրառելու համար:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ, գործնական աշխատանք՝ 34 ժամ</p>

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-003 «Կենդանիների էկոլոգիա», ՎԿՎ-5-19-006 «Մանրէակենսաբանություն», ՎԿՎ-5-19-007 «Վայրի կենդանատեսակների հետ աշխատանքներում կիրառվող սարքավորումներ և գործիքներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի անողնաշարավոր կենդանիների՝ բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները 2) ներկայացնի անողնաշարավոր կենդանիների կերակրման համար օգտագործվող կերերը և կազմել կերաբաժիններ 3) կազմակերպի և իրականացնել անողնաշարավոր կենդանիների կերակրումը
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել անողնաշարավոր կենդանիների՝ բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների ընտրված տեսակի՝ բնության մեջ ապրելու պայմանները, 2) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների ընտրված տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները, 3) ճիշտ է ստեղծում անողնաշարավոր կենդանիների յուրաքանչյուր տեսակի՝ տարիքային տարբեր խմբերի խնամքի և կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր միաբջիջ կենդանիներին, սպունգներին, աղեխորշավորներին, կլոր որդերին, օղակավոր որդերին, փափկամորթներին (գլխոտանիներ, փորոտանիներ), հողվածոտանիների (խեցգետնակերպեր, խելիցերավորներ, միջատներ), փշամորթներին պատկանող առանձին տեսակների բնության մեջ ապրելու

	<p>պայմանների առանձնահատկությունների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային իրավիճակ, որի ընթացքում ուսանողը ձևավորում է անողնաշարավորների յուրաքանչյուր տեսակի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ և ներկայացնում է տվյալ տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• միաբջիջ կենդանիների բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• սպունգների բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• աղեխորշավորների բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• օղակավոր որդերի բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• փափկամորթների տարբեր կարգաբանական խմբերի բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• հողվածոտանիների տարբեր կարգաբանական խմբերի բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները,</li> <li>• փշամորթների տարբեր կարգաբանական խմբերի բնության մեջ բնակվելու և անազատ պայմաններում խնամելու նպաստավոր պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), կենդանի անողնաշարավորներ, նրանց համար անհրաժեշտ տարաներ, ակվարիումներ, ինսեկտարիումներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ) և դեկորացիաների համար</p>

	անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, քարեր, ավազ, կոճղեր և այլն):
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել անողնաշարավոր կենդանիների կերակրման համար օգտագործվող կերերը և կազմել կերաբաժիններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում անողնաշարավոր կենդանիների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում առաջադրված տարբեր տեսակի կերերի քիմիական բաղադրությունը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում հիմնական կերերի սննդարար արժեքները և ճիշտ է գնահատում առաջադրված կերերի սննդարարությունը,</li> <li>4) ճիշտ է հաշվարկում անողնաշարավոր կենդանիների կերակրման նորմերը,</li> <li>5) ճիշտ է կատարում անողնաշարավոր կենդանիների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կերերի ընտրությունը,</li> <li>6) պահպանում է զոոհիգիենայի և անվտանգության կանոնները անողնաշարավորներին անազատ պայմաններում կերակրելու ընթացքում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն անողնաշարավորների կարգաբանական տարբեր խմբերին պատկանող առանձին տեսակների համար անազատ պայմաններում օգտագործվող կերերի տեսակների, դրանց քիմիական բաղադրության, սննդային արժեքի վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի գնահատել անողնաշարավոր կենդանիների համար անհրաժեշտ կերերի սննդարարությունը, հաշվարկել անողնաշարավորների կերակրման նորմերը, ընտրել նրանց թրթուրների և իմազո ձևերի համար նախատեսված կերերը: Ուսանողը անողնաշարավոր կենդանիների կերաբաժինները կազմելու և նրանց կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ծրագրային մանրամասներն են.</p>



	<ul style="list-style-type: none"> <li>անողնաշարավորների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման առանձնահատկություններն անազան պայմաններում,</li> <li>անողնաշարավորների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման նորմերն՝ ըստ տարիքային խմբերի:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), անողնաշարավոր կենդանիների համար սնունդ ծառայող կերեր, ինսկետարիումներ, կերը թարմ պահելու սարքավորումներ (սառնարաններ, սառցարաններ), ավտահանիչ նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կազմակերպել և իրականացնել անողնաշարավոր կենդանիների կերակրումը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կազմում անողնաշարավոր կենդանիների տվյալ առանձնյակի կերաբաժինը,</li> <li>2) ճիշտ հաճախականությամբ է կազմակերպում ու ճիշտ եղանակով է կատարում անողնաշարավոր կենդանիների կերակրումը,</li> <li>3) ճիշտ է ընտրում անողնաշարավոր կենդանիներին բնորոշ կերատեսակները՝ ըստ սննդարարության ու մարսելիության,</li> <li>4) ճիշտ է բաշխում կերը անողնաշարավոր կենդանիներին հասանելի տեղամասերում:</li> </ol>
<b>Փնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կազմել առանձին տեսակների պատկանող իմագո կամ թրթուրային փուլում գտնվող առանձնյակների կերաբաժինը, կերակրել այդ կերաբաժնով համապատասխան առանձնյակներին: Կերակրելուց առաջ ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան կեր իրեն առաջարկված կերերի ցուցակից, հաշվի առնելով այդ կերերի</p>

	<p>սնդարարությունը և մարսելիությունն անողնաշարավորների տվյալ տեսակի համար: Ուսանողին կհանձնարարվի նաև բաշխել կամ առաջարկել կերն այնպես, որ այն առավելագույնս հարմար լինի անողնաշարավորներին՝ հեշտորեն գտնելու և սնվելու համար: Ուսանողը անողնաշարավորների կերաբաժինները կազմելու և նրանց կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անողնաշարավոր կենդանիների կերերի սնդարարության ցուցանիշները,</li> <li>• անողնաշարավոր կենդանիների կերերի մարսելիության ցուցանիշները,</li> <li>• անողնաշարավոր կենդանիների առանձին տեսակների կերաբաժինների քանակությունն՝ ըստ տարիքային խմբերի,</li> <li>• անողնաշարավոր կենդանիների համար կեր հանդիսացող նյութերի բաշխման ու տեղադրման առանձնահատկություններն անազատ պայմաններում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը կատարում է բոլոր հանձնարարություններն անշան թերություններով:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ), անողնաշարավորների համար սնունդ ծառայող կերեր (կենդանական և բուսական ծագում ունեցող) և դրանց ցուցակներ, կերամասններ, կերը թարմ կամ կենդանի վիճակում պահելու սարքավորումներ (սառնարաններ, ակվարիումներ), ախտահանիչ նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿԿ-5-19-009

<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անազատ պայմաններում պահվող երկկենցաղների խնամքի և կերակրման մեթոդների մասին, ինչպես նաև նրա մոտ ձևավորել գործնական հմտություններ այդ մեթոդները կիրառելու համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-003 «Կենդանիների էկոլոգիա», ՎԿՎ-5-19-006 «Մանրէակենսաբանություն», ՎԿՎ-5-19-007 «Վայրի կենդանատեսակների հետ աշխատանքներում կիրառվող սարքավորումներ և գործիքներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի երկկենցաղների բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները,</li> <li>2) ներկայացնի երկկենցաղների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները և կազմել կերաբաժիններ,</li> <li>3) կազմակերպի և իրականացնի երկկենցաղների տարիքային տարբեր խմբերի կերակրումը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել երկկենցաղների բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների յուրաքանչյուր տեսակի բնության մեջ ապրելու պայմանները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների յուրաքանչյուր տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները,</li> <li>3) ճիշտ է ձևավորում երկկենցաղների յուրաքանչյուր տեսակի տարիքային տարբեր խմբերի կենսագործունեության</li> </ol>

	<p>համար անհրաժեշտ ակվարիումային, ակվատերարիումային կամ տերարիումային պայմանները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր պոչավոր երկկենցաղներին (տրիտոններ, սալամանդրներ, ամբիստոմներ, ամֆիումֆներ, պրոթեյներ, գաղտնիխոնիկավորներ), անպոչ երկկենցաղներին (հրադոդոչներ, սխտորագորտեր, ծառագորտեր, իսկական գորտեր, դոդոչների, թխտոտ գորտեր, այլն) և անոտ երկկենցաղներին պատկանող առանձին տեսակների բնության մեջ ապրելու պայմանների առանձնահատկությունների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային իրավիճակ, որի ընթացքում ուսանողը ձևավորում է երկկենցաղների յուրաքանչյուր տեսակի տարիքային տարբեր խմբերի կենսագործունեության համար անհրաժեշտ ակվարիումային, ակվատերարիումային կամ տերարիումային պայմաններ և ներկայացնի տվյալ տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• պոչավոր երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերին պատկանող տեսակների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում պոչավոր երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերի առանձին տեսակների խնամքի պայմանները,</li> <li>• անոտ երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերին պատկանող տեսակների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում անոտ երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերի առանձին տեսակների խնամքի պայմանները,</li> <li>• անպոչ երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերին պատկանող տեսակների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում անպոչ երկկենցաղների տարբեր կարգաբանական խմբերի առանձին տեսակների խնամքի պայմանները:</li> </ul>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), կենդանի երկկենցաղներ, նրանց համար անհրաժեշտ ակվարիումներ, ակվատերարիումներ, տերարիումներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ, ջրցող սարքեր, կերակրամաններ) և դեկորացիաների համար անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, քարեր, ավազ, կոճղեր և այլն):
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել երկկենցաղների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները և կազմել կերաբաժիններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում երկկենցաղների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում առաջադրված տարբեր տեսակի կերերի քիմիական բաղադրությունը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում հիմնական կերերի սննդարար արժեքները և ճիշտ է գնահատում առաջադրված կերերի սննդարարությունը,</li> <li>4) ճիշտ է հաշվարկում երկկենցաղների կերակրման նորմերը,</li> <li>5) ճիշտ է կատարում երկկենցաղների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կերերի ընտրությունը,</li> <li>6) պահպանում է զոոհիգիենայի և անվտանգության կանոնները երկկենցաղներին անազատ պայմաններում կերակրելու ընթացքում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր պոչավոր երկկենցաղներին (տրիտոններ, սալամանդրներ, ամբիստոմներ, ամիումֆներ, պրոթեյներ, գաղտնիխոնկավորներ), անպոչ երկկենցաղներին (հրադողոշներ, սխտորագորտեր, ծառագորտեր, իսկական գորտեր, դողոշների, թիատտ գորտեր և այլն) և անոտ երկկենցաղներին պատկանող

	<p>առանձին տեսակների համար անազատ պայմաններում օգտագործվող կերերի տեսակների, դրանց քիմիական բաղադրության, սննդային արժեքի վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի գնահատել երկկենցաղների համար անհրաժեշտ կերերի սննդարարությունը, հաշվարկել երկկենցաղների կերակրման նորմերը, ընտրել երկկենցաղների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կերերը: Ուսանողը երկկենցաղների կերաբաժինները կազմելու և երկկենցաղներին կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• երկկենցաղների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման առանձնահատկություններն անազատ պայմաններում,</li> <li>• երկկենցաղների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման նորմերն՝ ըստ տարիքային խմբերի,</li> <li>• անազատ պայմաններում երկկենցաղներին կերակրելու ընթացքում զոոհիգիենայի և անվտանգության կանոնների պահպանումը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), երկկենցաղների համար սնունդ ծառայող կերեր (միաբջիջ կենդանիների կուլտուրաներ, որդեր, միջատներ, կրծողներ, շերեփուկների համար՝ բուսական և կենդանական ծագում ունեցող արհեստական կերեր), ուսումնական խոհանոց, կերամաններ, կերը թարմ կամ կենդանի վիճակում պահելու սարքավորումներ (սառնարաններ, ակվարիումներ), ախտահանիչ նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Կազմակերպել և իրականացնել երկկենցաղների տարիքային տարբեր խմբերի կերակրումը</p>

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կազմում հասուն երկկենցաղների և նրանց թրթուրների, շերեփուկների կերաբաժինը,</li> <li>2) ճիշտ հաճախականությամբ է կազմակերպում ու ճիշտ եղանակով է կատարում հասուն երկկենցաղների և նրանց թրթուրների, շերեփուկների կերակրումը,</li> <li>3) ճիշտ է ընտրում թրթուրների և շերեփուկների մեկնարկային հանդիսացող կերը՝ ըստ սննդարարության, մարսելիության, ջրակայունության և ջրում լողալու ունակության,</li> <li>4) ճիշտ է ընտրում հասուն երկկենցաղների համար կեր հանդիսացող օրգանիզմներին՝ ըստ սննդարարության և մարսելիության,</li> <li>5) ճիշտ է բաշխում կերը ակվատերարիումի կամ տերարիումի համապատասխան տեղամասերում:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կազմել առանձին տեսակների պատկանող հասուն երկկենցաղների և նրանց թրթուրների կամ շերեփուկների կերաբաժինը, կերակրել այդ կերաբաժնով հասուն երկկենցաղներին և նրանց թրթուրներին կամ շերեփուկներին: Երկկենցաղների թրթուրներին և շերեփուկներին, ինչպես նաև հասուն երկկենցաղներին կերակրելուց առաջ ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան կեր իրեն առաջարկված կերերի ցուցակից՝ հաշվի առնելով այդ կերերի սննդարարությունը և մարսելիությունը, ջրակայությունը և ջրում լողալու ունակությունը: Ուսանողին կհանձնարարվի նաև բաշխել կամ առաջարկել կերն այնպես, որ այն առավելագույնս հարմար լինի երկկենցաղներին՝ հեշտորեն գտնելու և սնվելու համար: Ուսանողը երկկենցաղների կերաբաժինները կազմելու և երկկենցաղներին կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• երկկենցաղների հասուն ու երիտասարդ կենդանիների, շերեփուկների և թրթուրների կերերի սննդարարության ցուցանիշները,</li> <li>• կերերի մարսելիության ցուցանիշները երկկենցաղների հասուն ու երիտասարդ կենդանիների, շերեփուկների և թրթուրների մոտ,</li> <li>• երկկենցաղների առանձին տեսակների կերաբաժինների քանակությունն՝ ըստ տարիքային խմբերի,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>երկկենցաղների կերակրման տեխնիկական միջոցներն ու լուծումները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ), երկկենցաղների համար սնունդ ծառայող կերեր (միաբջիջ կենդանիների կուլտուրաներ, որդեր, միջատներ, կրծողներ, շերտփուկների համար՝ բուսական և կենդանական ծագում ունեցող արհեստական կերեր) և դրանց ցուցակներ, կերամաններ, կերը թարմ կամ կենդանի վիճակում պահելու սարքավորումներ (սառնարաններ, ակվարիումներ), ախտահանիչ նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԱՆԱՋԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-010
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անազատ պայմաններում պահվող սողունների խնամքի և կերակրման մեթոդների մասին, ինչպես նաև նրա մոտ ձևավորել գործնական հմտություններ այդ մեթոդները կիրառելու համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ, գործնական աշխատանք՝ 34 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-003 «Կենդանիների էկոլոգիա», ՎԿՎ-5-19-006 «Մանրէակենսաբանություն», ՎԿՎ-5-19-007 «Վայրի կենդանատեսակների հետ աշխատանքներում կիրառվող սարքավորումներ և գործիքներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.  1) ներկայացնի սողունների բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ



	<p>պայմանները,</p> <p>2) ներկայացնի սողունների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները և կազմել կերաբաժիններ,</p> <p>3) իրականացնի սողունների տարիքային տարբեր խմբերի կերակրումը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սողունների բնության մեջ ապրելու և անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում սողունների յուրաքանչյուր տեսակի բնության մեջ ապրելու պայմանները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում սողունների յուրաքանչյուր տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները,</p> <p>3) ճիշտ է ձևավորում սողունների յուրաքանչյուր տեսակի տարիքային տարբեր խմբերի խնամքի և կենսագործունեության համար անհրաժեշտ ակվարիումային, ակվատերարիումային կամ տերարիումային պայմանները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կտցազլխավորներին, թեփուկավորներին, կոկորդիլոսներին, կրիաներին պատկանող առանձին տեսակների բնության մեջ ապրելու պայմանների առանձնահատկությունների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային իրավիճակ, որի ընթացքում ուսանողը ձևավորում է սողունների յուրաքանչյուր տեսակի տարիքային տարբեր խմբերի կենսագործունեության համար անհրաժեշտ ակվարիումային, ակվատերարիումային կամ տերարիումային պայմաններ և ներկայացնում է տվյալ տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• կտցազլխավորների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում կտցազլխավորների խնամքի պայմանները,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• թեփուկավորների տարբեր կարգաբանական խմբերին պատկանող տեսակների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում թեփուկավորների տարբեր կարգաբանական խմբերի առանձին տեսակների խնամքի պայմանները,</li> <li>• կրիաների տարբեր կարգաբանական խմբերին պատկանող տեսակների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում կրիաների տարբեր կարգաբանական խմբերի առանձին տեսակների խնամքի պայմանները,</li> <li>• կոկորդիլոսների բնության մեջ ապրելու միկրոպայմանները,</li> <li>• անազատ պայմաններում կոկորդիլոսների առանձին տեսակների խնամքի պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), կենդանի սողուններ, սողունների մուլյաժներ, նրանց համար անհրաժեշտ ակվարիումներ, ակվատերարիումներ, տերարիումներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ, ջրցող սարքեր, կերակրամաններ) և դեկորացիաներ համար անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, քարեր, ավազ, կոճղեր և այլն):</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Ներկայացնել սողունների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները և կազմել կերաբաժիններ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է ներկայացնում սողունների կերակրման համար օգտագործվող կերերի տեսակները,</p>

	<p>2) ճիշտ է ներկայացնում առաջադրված տարբեր տեսակի կերերի քիմիական բաղադրությունը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հիմնական կերերի սննդարար արժեքները և ճիշտ է գնահատում առաջադրված կերերի սննդարարությունը,</p> <p>4) ճիշտ է հաշվարկում սողունների կերակրման նորմերը,</p> <p>5) ճիշտ է կատարում սողունների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կերերի ընտրությունը,</p> <p>6) պահպանում է զոոհիգիենայի և անվտանգության կանոնները սողուններին անազատ պայմաններում կերակրելու ընթացքում</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն կտցազվխավորներին, թեփուկավորներին, կոկորդիլոսներին, կրիաներին պատկանող առանձին տեսակների համար անազատ պայմաններում օգտագործվող կերերի տեսակների, դրանց քիմիական բաղադրության, սննդային արժեքի վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի գնահատել սողունների համար անհրաժեշտ կերերի սննդարարությունը, հաշվարկել սողունների կերակրման նորմերը, ընտրել սողունների տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված կերերը: Ուսանողը սողունների կերաբաժինները կազմելու և սողուններին կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• սողունների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման առանձնահատկություններն անազատ պայմաններում,</li> <li>• սողունների կարգաբանական տարբեր խմբերի կերակրման նորմերն՝ ըստ տարիքային խմբերի,</li> <li>• անազատ պայմաններում սողուններին կերակրելու ընթացքում զոոհիգիենայի և անվտանգության կանոնների պահպանումը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ</p>

	<p>մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), սողունների համար սնունդ ծառայող կերեր (անողնաշարավորներ, կրծողներ, մանր թռչուններ), վիվարիում, կերամաններ, կերը թարմ կամ կենդանի վիճակում պահելու սարքավորումներ (սառնարաններ, սառցարաններ), ավտոահանիչ նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Իրականացնել սողունների տարիքային տարբեր խմբերի կերակրումը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կազմում հասուն և երիտասարդ սողունների կերաբաժինը,</li> <li>2) ճիշտ հաճախականությամբ է կազմակերպում ու ճիշտ եղանակով է կատարում հասուն և երիտասարդ սողունների կերակրումը,</li> <li>3) ճիշտ է ընտրում երիտասարդ սողունների մեկնարկային հանդիսացող կերը ըստ սննդարարության, մարսելիության, ջրակայունության և ջրում լողալու ունակության,</li> <li>4) ճիշտ է ընտրում յուրաքանչյուր տեսակի հասուն սողունների համար կեր հանդիսացող օրգանիզմներին՝ ըստ սննդարարության և մարսելիության,</li> <li>5) ճիշտ է բաշխում կերը ակվատերարիումի կամ տերարիումի համապատասխան տեղամասերում:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կազմել առանձին տեսակների պատկանող հասուն կամ երիտասարդ սողունների կերաբաժինը, կերակրել այդ կերաբաժնով հասուն կամ երիտասարդ առանձնյակներին: Կերակրելուց առաջ ուսանողին կհանձնարարվի ընտրել համապատասխան կեր իրեն առաջարկված կերերի ցուցակից՝ հաշվի առնելով այդ կերերի սննդարարությունը և մարսելիությունը սողունների տվյալ տեսակի համար: Ուսանողին կհանձնարարվի նաև բաշխել կամ առաջարկել կերն այնպես, որ այն առավելագույնս հարմար լինի սողուններին՝ հեշտորեն գտնելու և սնվելու համար: Ուսանողը սողունների կերաբաժինները կազմելու և սողուններին կերակրելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p>

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• սողունների հասուն ու երիտասարդ կենդանիների կերերի սննդարարության ցուցանիշները,</li> <li>• կերերի մարսելիության ցուցանիշները սողունների տարբեր տեսակների հասուն ու երիտասարդ առանձնյակների մոտ,</li> <li>• սողունների առանձին տեսակների կերաբաժինների քանակությունն՝ ըստ տարիքային խմբերի,</li> <li>• երկկենցաղների կերակրման տեխնիկական միջոցներն ու լուծումները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ), սողունների համար սնունդ ծառայող կերեր (անողաշարավորներ, կրծողներ, մանր թռչուններ, բուսական սնունդ և այլն) և դրանց ցուցակներ, կերամաններ, կերը թարմ կամ կենդանի վիճակում պահելու սարքավորումներ (սառնարաններ, ակվարիումներ), ախտահանիչ նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-011
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անազատ պայմաններում պահվող վայրի թռչունների խնամքի և կերակրման մեթոդների մասին, ինչպես նաև նրա մոտ ձևավորել գործնական հմտություններ այդ մեթոդները կիրառելու համար:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ</p>

<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-003 «Կենդանիների էկոլոգիա», ՎԿՎ-5-19-006 «Մանրէակենսաբանություն», ՎԿՎ-5-19-007 «Վայրի կենդանատեսակների հետ աշխատանքներում կիրառվող սարքավորումներ և գործիքներ» մոդուլները:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի վայրի թռչունների անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները,</li> <li>2) ներկայացնի թռչունների կերակրման համար օգտագործվող կերերը և կազմել կերաբաժիններ,</li> <li>3) իրականացնի թռչունների տարիքային տարբեր խմբերի կերակրումը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել վայրի թռչունների անազատության մեջ խնամելու համար անհրաժեշտ պայմանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում վայրի թռչունների յուրաքանչյուր տեսակի՝ ազատության մեջ ապրելու պայմանները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում վայրի թռչունների յուրաքանչյուր տեսակի՝ անազատության մեջ պահելու և խնամելու պայմանները,</li> <li>3) ճիշտ է ձևավորում վայրի թռչունների յուրաքանչյուր տեսակի տարբեր տարիքային խմբերի կենսագործունեության համար անհրաժեշտ տարածքները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր վայրի թռչունների պատկանող առանձին տեսակների բնության մեջ ապրելու պայմանների առանձնահատկությունների վերաբերյալ: Կատեղծվի աշխատանքային իրավիճակ, որի ընթացքում ուսանողը պետք է ձևավորի թռչունների յուրաքանչյուր տեսակի տարիքային տարբեր խմբերի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմաններ և ներկայացնում է տվյալ տեսակի անազատության մեջ խնամելու անհրաժեշտ պայմանները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p>

<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող կամ սեռականապես խթանված սողուններ, դրանց համար անհրաժեշտ տարաներ, ակվարիումներ, ակվատերարիումներ, տերարիումներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ) և բազմացումը խթանող անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, ավազ, թաքստոցներ և այլն), ախտահանող նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Իրականացնել սողունների բազմացման գործընթացները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է որոշում սողունների՝ անազատ պայմաններում բազմացնելու ժամկետները, 2) ապահովում է զուգավորման համար անհրաժեշտ պայմանները, 3) ճիշտ է կատարում ստացված բազմացումից հետո մայրական կազմի առանձնացումը, նրա խնամքը և առողջության պահպանման գործողությունները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն սողունների անազատ պայմաններում բազմացնելու ժամկետների, զուգավորման համար անհրաժեշտ պայմանների, բազմացումից հետո մայրական կազմի առանձնացման, նրա խնամքի և</p>

	<p>առողջության պահպանմանն առնչվող գործողությունների վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կիրառել սողունների զուգավորման համար հատուկ տեխնիկական միջոցներ՝ ապահովելով զուգավորման համար անհրաժեշտ ժամկետները և պայմանները: Ուսանողը պետք է ապահովի մայրական կազմի առանձնացումը, վերջինիս հետագա խնամքը: Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անազատ պայմաններում սողունների բազմանալու ժամկետները,</li> <li>• սողունների զուգավորման համար անհրաժեշտ պայմանները,</li> <li>• զուգավորումից և բազմացումից հետո սողունների մայրական կազմի խնամքի անհրաժեշտ պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող սողուններ, դրանց համար անհրաժեշտ տարաներ, ակվարիումներ, ակվատերարիումներ, տերարիումներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ) և բազմացումը խթանող անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, ավազ, թաքստոցներ և այլն), ախտահանող նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Իրականացնել սողունների ձվերի ինկուբացում ու մատղաշների առաջնային խնամք</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է կատարում սողունների ձվերի ինկուբացման աշխատանքները՝ ապահովելով արտաքին միջավայրի անհրաժեշտ պայմանները,</p>

	<p>2) ճիշտ է կիրառում նորածին ծագերի խնամքի գործընթացները,</p> <p>3) ճիշտ է կատարում նորածին ծագերի առաջին կերակրման գործընթացները,</p> <p>4) ճիշտ է կատարում երիտասարդ առաձնյակների առանձնացման և տեղափոխման աշխատանքները՝ դրանց չափերի մեծանալուն զուգընթաց,</p> <p>5) ապահովում է մատղաշ կենդանիների աճի զոոսանիտարական պահանջները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն սողունների ձվերի ինկուբացման, մատղաշների խնամքի, կերակրման ու պահպանման վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել սողունների ձվերի ինկուբացման աշխատանքներ, խնամել մատղաշներին, առանձնացնել՝ տեղափոխելով նոր կացարան՝ դրանց չափերի մեծանալուն զուգընթաց:</p> <p>Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• սողունների բեղմնավորված ձվերի առանձնացում և ինկուբացիա, ձվակենդանածին տեսակների մոտ՝ նորածինների ընդունում,</li> <li>• սողունների նորածին ծագերի կերակրում և համակողմանի խնամք:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բեղմնավորված ձվեր, դրանց ինկուբացման համար անհրաժեշտ ինկուբատորներ, մատղաշների առանձնացման համար հիգիենիկ տերարիումներ՝ համապատասխան նյութերով և սարքավորումներով (լուսատու սարքեր, տաքացուցիչներ, ավտոմատ կառավարվող արքավորումներ և այլն), ախտահանող նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ,</p>

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-017
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ անազատ պայմաններում վայրի թռչունների բուժման և բազմացման ընթացքում կիրառվող տեխնիկայի ու մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել գործնական հմտություններ այդ տեխնիկան և մեթոդները կիրառելու համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 32 ժամ, գործնական աշխատանք՝ 40 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-011 «Վայրի թռչունների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում» և ՎԿՎ-5-19-013 «Վայրի կենդանիների արհեստական սերմնավորում» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ul style="list-style-type: none"> <li>1) կազմակերպի բազմացման համար նախատեսվող վայրի թռչունների առանձնյակների, զույգերի, խմբերի ընտրություն և նախապատրաստում,</li> <li>2) կատարի բազմացման համար ընտրված թռչունների խնամքը և բազմացման նախապատրաստական աշխատանքները,</li> <li>3) իրականացնի վայրի թռչունների բազմացման գործընթաց,</li> <li>4) իրականացնի վայրի թռչունների ձվերի ինկուբացիա և մատղաշի խնամք:</li> </ul>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կազմակերպել բազմացման համար նախատեսվող վայրի թռչունների առանձնյակների, զույգերի, խմբերի ընտրություն և նախապատրաստում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում բազմացման համար պատրաստ վայրի թռչունների առանձնյակների, զույգերի, խմբերի ընտրության և նախապատրաստման մեթոդները,</p> <p>2) ճիշտ է պահպանում անվտանգության ու զոոհիգիենայի կանոնները աշխատանքների իրականացման ժամանակ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր բազմացմանը պատրաստ վայրի թռչունների առանձնյակներին կամ զույգերին ընտրելու, դրանց բազմացման համար անհրաժեշտ պայմանների նախապատրաստման, անկանխատեսելի իրավիճակներում ռեզերվային կենդանիների առկայության անհրաժեշտության վերաբերյալ: Կստեղծվի գործնական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը վայրի թռչունների համապատասխան խմբից բազմացման նպատակով կառանձնացնի համապատասխան զույգ կամ խումբ՝ դրանց համար ձևավորելով անհրաժեշտ պայմաններ բազմանալու համար: Ուսանողը կընտրի նաև այնպիսի վայրի թռչուններ, որոնք կարող են փոխարինել հիմնական խմբի թռչուններին, եթե վերջիններիս չհաջողվի բազմացնել: Բոլոր գործողություններում ուսանողը պետք է պահպանի անվտանգության և զոոհիգիենայի կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի թռչունների առանձնյակների, զույգերի, խմբերի ընտրության և նախապատրաստման մեթոդները,</li> <li>• վայրի թռչունների բազմացման համար անհրաժեշտ պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող վայրի թռչուններ, դրանց համար անհրաժեշտ վանդակներ, բներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, տաքացուցիչներ, օդորակիչներ) և բազմացումը խթանող անհրաժեշտ

	նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, ավազ, թաքստոցներ և այլն):
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կատարել բազմացման համար ընտրված թռչունների խնամքը և բազմացման նախապատրաստական աշխատանքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է կազմակերպում բազմացմանը նախապատրաստվող վայրի թռչունների կերակրումը, 2) ճիշտ է նախապատրաստում վայրի թռչունների բնադրման և բազմացման համար անհրաժեշտ պարագաներն ու պայմանները:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն բազմացման նախապատրաստվող վայրի թռչունների կերակրման, բազմացման նախապատրաստվող թռչունների սեռական ցանկությունը խթանելու արտաքին միջավայրի պայմանների, դրանց սեռական արգասիքների հասունացումը խթանելու մեթոդների, բազմացման պատրաստ թռչունների առանձնյակների խմբի կամ զույգի ձևավորմանը վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի իրականացնել բազմացման նախապատրաստվող վայրի թռչունների կերակրում և բազմացման համար պատրաստ առանձնյակների խմբի կամ զույգի ձևավորում՝ ապահովելով դրանց սեռական ցանկությունը խթանելու արտաքին միջավայրի պայմանները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կիրառել սեռական արգասիքների հասունացումն արհեստականորեն խթանելու միջոցներ:</p> <p>Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի թռչունների կերակրման առանձնահատկությունները բազմացման փուլում,</li> <li>• վայրի թռչունների վարքի առանձնահատկությունները բազմացման փուլում՝ զուգավորման վարք, տարածքային և բնադրման վարք,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>վայրի թռչունների բազմացմանը խթանող արտաքին պայմանները՝ ըստ տեսակային առանձնահատկությունների:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող կամ սեռականապես խթանված թռչունների համար անհրաժեշտ բներ, վանդակներ՝ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ, տաքացուցիչներ ), ինչպես նաև բազմացումը խթանող անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, ավազ, թաքսոցներ և այլն), ավստահանող նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Իրականացնել վայրի թռչունների բազմացման գործընթաց</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է որոշում վայրի թռչունների անազատ պայմաններում բազմանալու ժամկետները,</li> <li>2) ճիշտ է կիրառում զուգավորման համար անհարժեշտ հատուկ տեխնիկական միջոցները,</li> <li>3) ճիշտ է ապահովում զուգավորման և թխսակալման համար անհրաժեշտ պայմանները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն թռչունների անազատ պայմաններում բազմացնելու ժամկետների, զուգավորման համար անհրաժեշտ պայմանների, բազմացումից հետո մայրական կազմի առանձնացման, նրա խնամքի և առողջության պահպանմանն առնչվող գործողությունների վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կիրառել թռչունների զուգավորման համար հատուկ տեխնիկական միջոցներ՝ ապահովելով զուգավորման համար անհրաժեշտ ժամկետները և պայմանները: Ուսանողը պետք է ապահովի մայրական կազմի առանձնացումը, վերջինիս հետագա խնամքը: Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և</p>



	<p>անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի թռչունների անազատ պայմաններում բազմանալու ժամկետները,</li> <li>• վայրի թռչունների զուգավորման և թխսակալման համար անհրաժեշտ պայմանները:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող թռչուններ, դրանց համար անհրաժեշտ՝ բներ, վանդակներ համապատասխան սարքավորումներով (լուսատու սարքեր, պոմպեր, ֆիլտրներ, տաքացուցիչներ,) և բազմացումը խթանող անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, ավազ, թաքստոցներ և այլն), ախտահանող նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Իրականացնել վայրի թռչունների ձվերի ինկուբացիա և մատղաշի խնամք</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է իրականացնում թխսակալող թռչունների խնամքը,</li> <li>2) ճիշտ է ընտրում վայրի թռչուններից ստացված ձվերը ինկուբացիայի համար,</li> <li>3) ճիշտ է կատարում վայրի թռչուններից ստացված ձվերի ինկուբացիան,</li> <li>4) ճիշտ է կազմակերպում նորածին ճտերի խնամքը:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն թռչունների ձվերի ինկուբացման, մատղաշների խնամքի, կերակրման ու պահպանման վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել թռչունների ձվերի ինկուբացման աշխատանքներ, խնամել մատղաշներին, առանձնացնել՝ տեղափոխելով նոր կացարան՝ դրանց չափերի մեծանալուն զուգընթաց:</p>

	<p>Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոռիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• թխսակավող վայրի թռչունների կերակրումը և խնամքը,</li> <li>• վայրի թռչունների ձվերի ընտրությունը և իկուբացիան,</li> <li>• նորածին ճտերի կերակրումը և խնամքը:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բեղմնավորված ձվեր, դրանց ինկուբացման համար անհրաժեշտ ինկուբատորներ, մատղաշների առանձնացման համար բներ, կամ վանդակներ՝ համապատասխան նյութերով և սարքավորումներով (լուսատու սարքեր, տաքացուցիչներ, ավտոմատ կառավարվող արքավորումներ և այլն), ախտահանող նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՅՐԻ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՆԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»</b></p>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՎԿՎ-5-19-018
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ անագատ պայմաններում վայրի կաթնասունների բուծման և բազմացման ընթացքում կիրառվող տեխնիկայի և մեթոդների մասին, ինչպես ձևավորել գործնական հմտություններ այդ տեխնիկան ու մեթոդները կիրառելու համար:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի ՎԿՎ-5-19-012«Վայրի կաթնասունների խնամքի և կերակրման մեթոդներն անազատ պայմաններում» և ՎԿՎ-5-19-013 «Վայրի կենդանիների արհեստական սերմնավորում» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) իրականացնի վայրի կաթնասունների զուգավորման համար խմբերի ձևավորում և կատարել զույգերի ընտրություն.</li> <li>2) իրականացնել վայրի կաթնասունների բազմացման համար նախապատրաստական աշխատանքները,</li> <li>3) իրականացնի վայրի կաթնասունների զուգավորման գործընթացն անազատ պայմաններում,</li> <li>4) իրականացնել անազատ պայմաններում վայրի կաթնասուններից ստացված սերնդի հսկողություն:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իրականացնել վայրի կաթնասունների զուգավորման համար խմբերի ձևավորում և կատարել զույգերի ընտրություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում բազմացման համար նպատակահարմար խմբերի ձևավորումը,</li> <li>2) ճիշտ է կատարում բազմացման նպատակով զույգերի ընտրությունը,</li> <li>3) տարբերակում է տվյալ վայրի կենդանատեսակի բազմացման առանձնահատկությունները,</li> <li>4) ուսումնասիրում է բուժման համար ընտրված խմբերում տվյալ կենդանու վերարտադրական ունակությունները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում տվյալ վայրի կաթնասունի սեռական դիմորֆիզմը/ սեռերի ակնադիտական տարբերակումը/:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր բազմացման համար պատրաստ վայրի կաթնասունների առանձնյակներին կամ

	<p>զույգերին ընտրելու, վեջիններիս բազմացման համար անհրաժեշտ պայմանների նախապատրաստման, անկանխատեսելի իրավիճակներում ռեզերվային կենդանիների առկայության անհրաժեշտության վերաբերյալ: Կստեղծվի գործնական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը փորձակենդանիների համապատասխան խմբից բազմացման նպատակով կառանձնացնի զույգ կամ խումբ՝ դրանց համար ձևավորելով անհրաժեշտ պայմաններ բազմանալու համար: Բոլոր գործողություններում ուսանողը պետք է պահպանի անվտանգության և զոոհիգիենայի կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կաթնասունների զուգավորում, խմբերի ձևավորում, զույգի ընտրություն,</li> <li>• վայրի կաթնասունների տարբեր տեսակների վերարտադրության ունակությունը և առանձնահատկությունները,</li> <li>• սեռական դիմորֆիզմ:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող կամ արհեստականորեն խթանված փորձակենդանիներ, դրանց համար անհրաժեշտ վանդակներ, ազատավանդակներ, դեկորացիաների համար անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, քարեր, ավազ, կոճղեր և այլն):</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Իրականացնել վայրի կաթնասունների բազմացման համար նախապատրաստական աշխատանքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ընտրում վայրի կաթնասունների զուգավորման համար նպաստավոր ժամանակն ու պայմանները,</p>

	<p>2) ապահովում է վայրի կաթնասունների փոխարինող զույգի առկայությունը չնախատեսված իրավիճակների համար,</p> <p>3) նախապատրաստում է ընտրված զույգերին զուգավորման գործընթացին,</p> <p>4) ապահովում է բուծման համար ընտրված վայրի կաթնասունների խմբերի համապատասխան պահվածքն ու խնամքը նախազուգավորման փուլում:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն բազմացման նախապատրաստվող վայրի կաթնասունների կերակրման, բազմացման նախապատրաստվող կենդանու սեռական ցանկությունը խթանելու արտաքին միջավայրի պայմանների, սեռական արգասիքների հասունացումն արհեստականորեն խթանելու մեթոդների, բազմացման համար պատրաստ առանձնյակների խմբի կամ զույգի ձևավորմանը վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի իրականացնել նախազուգավորման փուլում գտնվող կենդանիների խնամք և կերակրում: Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կաթնասունների զուգավորման համար նպաստավոր ժամանակն ու պայմանները,</li> <li>• վայրի կաթնասունների կերակրումը և խնամքը նախազուգավորման փուլում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող կամ արհեստականորեն խթանված փորձակենդանիներ, դրանց համար անհրաժեշտ վանդակներ, ազատավանդակներ, դեկորացիաների համար անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր, քարեր, ավազ, կոճղեր և այլն), սեռական արգասիքների հասունացումն արհեստականորեն խթանելու տեխնիկական միջոցներ, դեղորայք և ախտահանող նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ,</p>

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իրականացնել վայրի կաթնասունների զուգավորման գործընթացն անազատ պայմաններում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է կազմակերպում վայրի կաթնասունների զուգավորումն անազատ պայմաններում,</p> <p>2) պահպանում է անվտանգության կանոնները նախապատրաստական աշխատանքների և բուն զուգավորման ընթացքում,</p> <p>3) ճիշտ և նպատակային է կիրառում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները և գործիքները զուգավորման ընթացքում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն վայրի կաթնասուններին անազատ պայմաններում բազմացնելու ժամկետների, զուգավորման համար անհրաժեշտ պայմանների, բազմացումից հետո մայրական կազմի առանձնացման, նրա խնամքի և առողջության պահպանմանն առնչվող գործողությունների վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կիրառել զուգավորման համար հատուկ տեխնիկական միջոցներ՝ ապահովելով զուգավորման համար անհրաժեշտ ժամկետները և պայմանները: Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կաթնասունների զուգավորման առանձնահատկությունները,</li> <li>• անազատության մեջ պահվող վայրի կաթնասունների զուգավորման գործընթացի կազմակերպում:</li> </ul> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), բազմացման շրջանում գտնվող կամ արհեստականորեն խթանված փորձակենդանիներ, դրանց համար անհրաժեշտ վանդակներ, ազատավանդակներ, դեկորացիաներ համար անհրաժեշտ նյութեր (կենդանի և արհեստական բույսեր,</p>

	քարեր, ավազ, կոճղե և այլն), սեռական արգասիքների հասունացումն արհեստականորեն խթանելու տեխնիկական միջոցներ և դեղորայք, ախտահանող նյութեր, սարքեր, գործիքներ, նյութատեխնիկական միջոցներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իրականացնել անազատ պայմաններում վայրի կաթնասուններից ստացված սերնդի հսկողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	1) կատարում է ստացված սերնդի նույնականացում (համարակալում), 2) իրականացնում է նորածնի հաշվառման աշխատանքները գրանցամատյանում, 3) ճիշտ է իրականացնում նորածնի խնամքի միջոցառումներն անազատ պայմաններում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն վայրի կաթնասուններից ստացված սերնդի հետագա հսկողություն, խնամքի և կերակրման վերաբերյալ հարցեր: Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել վայրի կաթնասուններից ստացված սերնդի համարակալում և հաշվառում, տեղափոխում նոր կացարան՝ դրանց չափերի մեծանալուն զուգընթաց: Ուսանողը վերոգրյալ գործողությունները կատարելու ընթացքում պետք է պահպանի զոոհիգիենայի և անվտանգության կանոնները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> <li>• վայրի կաթնասուններից ստացված սերունդի խնամքի և կերակրման առանձնահատկությունները,</li> <li>• նորածին ձագերի նույնականացում և հաշվառում:</li> </ul> Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, տեղեկատվական բազաներ (համակարգիչ, որոշիչներ և այլն), մեթոդական ցուցումներ, գրանցամատյաններ, վանդակներ:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Ձ-5-19-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ, գործնական աշխատանք՝ 50 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը</li> <li>2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը</li> <li>3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ</li> <li>4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը</li> <li>5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը</li> </ol>



	<p>6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր</p> <p>7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում,</li> <li>3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է,</li> <li>4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է,</li> <li>5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</li> <li>8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական</p>

	<p>գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</li> <li>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</li> <li>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</li> <li>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</li> <li>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</li> </ol>

	<p>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</p> <p>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</p> <p>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</p> <p>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</p> <p>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները, ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում</p>

<b>ռեսուրսները</b>	անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում &lt;&lt;շուկա&gt;&gt; հասկացությունը,</li> <li>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</li> <li>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</li> <li>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</li> <li>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</li> <li>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</li> <li>8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,</li> <li>9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,</li> <li>10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,</li> <li>11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/: Արդյունքները անհրաժեշտ է

	<p>քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը:</p> <p>Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազորիի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,</li> <li>2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,</li> <li>4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է,</li> <li>5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման</li> </ol>

	<p>մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,</p> <p>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</p> <p>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</p> <p>12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ</p>

<b>ռեսուրսները</b>	ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) &lt;&lt;ծախս&gt;&gt; հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) տարբերակում է ծախսերի խմբերը,</li> <li>3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,</li> <li>5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,</li> <li>6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում,</li> <li>8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,</li> <li>9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,</li> <li>10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է,</li> <li>11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը:</p>

	<p>Ծախսերի հաշվապահական ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 6</b></p>	<p>Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,</li> <li>3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն,</li> <li>5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,</li> <li>6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,</li> <li>7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է,</li> <li>8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել,</li> <li>9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն</p>



	<p>նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 7</b></p>	<p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,</li> <li>3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում,</li> <li>4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,</li> <li>5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին,</li> <li>6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,</li> <li>8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,</li> </ol>

	9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը: Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>

